



ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչտային համար	12 Ձր.
Տարեկան	6 "
Վեցամսյ	15 "
Մեկամսյ	8 "
Պոչտային համար	3 Ձր.
Տարեկան	1.50 "
Վեցամսյ	1.50 "
Մեկամսյ	1.50 "

# ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalémcarian  
Mechitharistangasse W  
(Autriche)

Նամակ եւ դրամ դրկեյ  
Խմբագրութեան հասցէն

Редакция на вестникъ  
«Шаржумъ»  
Варна.  
Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ԶՈՐԵԲԸԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ  
ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Պոչտային համար ձեռնիկ  
Արտասահմանի համար ձեռնիկ  
(23) ՍԱՆԹԻՄ (X)

## ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՅՆԸ

Բան մը որ մեր մէջ ընդհանրապէս գէշ կերպով ըմբռնուած կամ ոչ կենսական նկատուելու դատապարտուած է, այն ալ ժողովուրդի հարազատ ձայնը ու անոր անփխսելի հեղինակութիւնն է:

Ասկից առաջ գրած «Ականատեսի մը վկայութիւնը» յօդուածիս մէջ «Սերոր սեղի տուած Ֆլիթի ձայնին» նախագատութիւնը կը շեշտէ սա ճշմարտութիւնը թէ մէն մի գործիչ կամ հաստատական մարդ պարտաւոր է գործել, կարգադրել ժողովուրդին ու հանրութեան շահերուն զուգընթաց եղանակով մը: Ֆլիթի զայրոյթը բուն ժողովուրդին ձայնն էր ու Սերոր այդ ձայնին միայն տեղի տուաւ:

Սա մէկ քանի տարուան զէպքերը մեզի ցոյց տուին թէ անոնք որ ինքզինքնին հանրային գործիչ կանուանէին ու ժողովուրդն ալ զանոնք այդ անունով կը ճանչնար, շատ շուտ մոռցան թէ իրենք ժողովուրդին նուիրուած՝ անձնական նկատումներ, անհատական շահեր չը պէտք է ունենային և իրեքու վիճակը կարգադրեցին միմիայն իրենց սինը որ հաշիւները նկատի առնելով:

Ինչ անուն տանք ատոր. դաստիարակութեան պակասութիւն, նկարագրի աղտոտութիւն թէ ոչ միջավայրի ազդեցութիւն:

Դժբաղդաբար մեր մէջ չը պակասեցան ու չեն պակսիր տակաւին այդ երեք դասակարգին պատկանողներն ալ հաւասարապէս:

Նուպար փաշա որ իբր պետական տաղանդաւոր մարդ եգիպտոսէ դուրս ալ գրեթէ ամբողջ Եւրոպայի մէջ մեծ համբաւ կը վայելէր, Փարաւսեան ճոխութեան շլացած՝ անոր բուրգերուն առջև յիսուն տարի շարունակ իր գլուխը խոնարհեցուց: Օր մը սակայն այդ խոնարհած

գլուխը բարձրացուց հայութեան գէմ պէն պու միլլէթէ յիսուլու շիւմ» նշանաւոր ձայնարկութիւնը նետելով ժողովուրդի մը երեսին, հասարակութեան մը վրայ որուն արիւնքն շինուած անոր ծոցին մէջ կեանք տուած էր:

Ես վստահ եմ թէ այդ իօսքը արտաբերած պահուն նուպար խղճի աննշան խայթ մը իսկ չի զգաց ու փոքրիկ սարսուռ մը իր մարմինը չօրօրեց, որովհետեւ դաստիարակութեան զգալի պակասը ու միջավայրի ազդեցութիւնը թմրեցուցած էին անոր ամենէն սուրը զգացումները:

Հիւանդ միամտութեամբ մը կը կարծէր թէ շատ մեծ ծառայութիւններ բրած է իր պատկանած ժողովուրդին և նոյնքան ծաղրելի յաւակնութեամբ համոզուած զայնուցած էր ինքն իր մէջ թէ՛ հայ ժողովուրդը իրմէ շատ աւելի փոքր իրեն առջև խոնարհելու ստիպուած՝ ինչպէս ինքը եգիպտոսի բուրգերուն առջև, օրուան ամէն ժամբուն խուկ ու մոմով զինքը պիտի պաշտէր: Պատրանքներուն ամենէն այլանդակը չէ՞ր միթէ ա:

Այդ մարդուն ներքուզականը (որ աւելի դամբանականի մը կը նմանէր) ընելու պարտականութիւնը զգաց Պարոն մը միայն որ կերեւայ թէ ինքզինքը անոր մօտաւոր արքանեակներէն կարծեց նկարագրի տկարութիւն ունեցող դասակարգին պատկանած ըլլալուն համար:

Մէկուկէս-երկու տարի առաջ, հոս Պ. Գալուստ Կաշապետեան մը կը մեռնի որ չեմ գիտեր ինչ սխառնի եղբի հայերու հանդէպ և լոկ իր անձնական վրէժը գոհացնելու նպատակով ճոխ գրադարանը յոյներուն կը նուիրէ: Ահաւասիկ լեզուազէտ, փիլիսոփայ, ներհուն իմաստասէր մը եթէ կուզէք բայց կուս դաստիարակութեան զուրկ անձ մը որ ժողովուրդին շահերը նկատի առնելու հոգեկան բարձրութիւնը չունեցու: ժողովուրդին զաւակները զլուսնաքով պիտի արտասանեն անոր անունը: Պ. Ստե.

փան Ոսկանեան հակառակ իր զարգացումին նկարագրի է զուրկ մարդ մըն է իբր հայ, քանի որ զարգացումէն օգուտ մը բուժին մը չուզեր հանել իր պատկանած հանրութեան:

Ինչո՞ւ. որովհետեւ տարիներ առաջ չեմ գիտեր ինչ խնդրի համար քէն պահած է եղբի հայերու գէմ: Սուր չի խայթի արդեօ՞ք իր պատկանելի տարիքէն երբ փոխանակ հայերէն լեզուով թերթ մը կամ հանդէս մը՝ հրատարակելով հայ ժողովուրդին օգտակար ըլլալու, Ֆրանսերէն թերթի մը խմբագրութիւնը ու անօրինութիւնը կը վարէ որպէս թէ Ֆրանսէ գրականութիւնը իրեն պէտք ունեցած ըլլար: Պզտիկ մարդերու պղտիկ հաշիւներն են ասոնք:

Ընդգայդ պատկարգին կը պատկանին այսօրուան Իլլիթի զպրոցական գործերը վարող մէկ քանի ջոյ աղաները որոնք հակառակ զպրոցին հատկութեան, դասատուները երեք ամիս շարունակ անվճար կը թողուն, ու չին խորհի թէ դասատուներուն անվճար մնալովը անուղղակի կերպով հարուածած կըլլան ժողովուրդին զաւակները որոնք ընդ սորվելէն վհատած օտար վարժարաններ պիտի յաճախեն օտար կրթութիւնով վատթարանալու:

Եթէ չեն կրնար հասարակական գործերը ժողովուրդին շահերուն ու օգուտին համաձայն վարել, թող չը վարանին իրենց ապիկարութիւնը հրապարակով յայտնելու և միանգամայն իրենց ստանձնած պարտականութիւնը աւելի արժանաւոր տարրի մը յանձնելու:

Հանրային գործերը շուկայի տափակ հաշիւներու չեն նմանիր: Ժողովուրդին շահերը ու անոր կենսական շիջերը աչքի առած՝ ունեցող երիտասարդութիւն մը շատ աւելի ընդունակ է քան այդ փոտած ջոյները:

Այ՞ ժամանակ է որ ամէն տեղ մեր հայրային գործերէն դուրս վաճառին անձուկ մարքի ու սրտի տէր փայտէ մարդերը:

Ժողովուրդին հարազատ ձայնը որպէս կը պահանջէ:  
ՊԱՀԱՒ  
Իգմբը 25 Մայիս

## ՔԱՂԱՔԱՍԱԿ ԱՌ Պ. Պ. ԽՍԿԵՆՏԵՐ ԵՒ Կ. ՅԱԿՈԲԵԱՆ

«Կոչկակարը քոյ կոչիկ կարն»,  
«Խոնարարը քոյ խոտիկ կփն»:

Պարոններ, դուք բարեհաճ էք Դաշնակցութեան առաջարկելու անկէ պակասելի պատուոյ ասան մը, միջնորդ պատարան մը կազմել Ա. Արփիարեանի անուանարկութեան ինչորին վերջ մը գնելու համար: Ապուք աս բրած էք ոչ իբր լոկ Արփիարի ընկերներ, ասկէ անօր պատիւը վերականգնելու համար, այլ իբր հայ-բարոյականութեան ասնւտներ, յանուն ազգային շահերու, յանուն հասարակական բարոյականութեան և այլ աղտոտ ու բարձր սկզբունքներու:

Ուրախ եմ, ի սրտէ ուրախ, Պ. Պ. Խսկենտէր և Յակոբեան, որ դուք ձեր անտարբեր-չէզոքութենէն դուրս կելլաք և կազմեք զձեք մը աւելի գրական քայլ բնել, ներգործական գիրք բռնել հայ հասարակութեան կեանքի մէջ, թէև, իբր առաջին փորձ, քիչ մը ձախլիկ կերպով:

Ձեր սա առաջին միջնորդական քայլը շնորհաւորեցէն ետքը, պարոններ, իբր հայ անհատ մը եւ իբր Դաշնակցական մը իրաւունք կը համարեմ քանի մը հարցումներ ձեզի ուղղելու: Իմ սա իրաւունքս, ամէն պարագայի մէջ աւելի ընդունելի է, քան ձեր հայ-բարոյականութեան ինքնակոչ սուստոն դասուալը: Եթէ դուք ասանց ո՛ր եւ ընտրութեան կրնաք հանդիսանալ իբր «արթար»ներ ու միջնորդ գասաւորներ, կըրնաք խօսիլ հայութեան, ժողովուրդի անունով (ու խօսիլ անբիւր մը համար բաւական անվայել ոճով: ), ես ալ ամէն հայ անհատի իրաւունք կուտամ ձեզի քանի մը հարցումներ ուղղելու:

1. Արդեօք ինչ պատճառով զձեզ վրդովիք է Արփիարի անբարոյական, խարդախ ու լրտես հրատարակութիւն, իսկ անոր քով եղած ու անկէ աւելի անբարոյական երեւոյթ մը ձեր բարեմիտ լուծեանն է արժանացեր: Ու սա վերջինը Արփիարեանի կեդրոնի ու խմբակի իբրար հետ մտերմ ու սրտակից ընկերներու ինքնազիր նամակներով պոզ, աւագակ, խար-



էն հաստացեալներն ալ թերահաստա կան :

Անցեալ անգամ հաղորդած էի Ռուսական «հայասէր» նօթայի մասին : Ան անգամ ես ալ կը շտաբայիմ : Նեմ գիտեր ինչ մտածեմ, ինչ պատճառ գտնեմ : Երբեք որ ինքզնիս ի բարի երազ է տեսեր : Ռուսական գեղարարի փոխանորդը բողոքը կրկնէ աւելի խստութեամբ, «հայերու անտանելի վիճակը» շեշտելով և սպառնաց :

Ուշադրութեան արժանի է որ աստեանակ կծու գիւմում մը քարի մը առաջ ալ ըրաւ սահմանի քերտերը զսպելու համար :

Նորէն արդեօք երկաթուղիէ մը կամ այլ մեծաշնորհ մը կուզեն փրցնել Համիտէն :

Ան և նախընթաց նօթի պատասխանը նորէն Արթիւն, ծնունդով հայ մը պիտի գրէ : Դա՛ն, դա՛ն երեւոյթ :

Մայիս 20ին երկու իւլէմաներն Ապտուլլահ և Էրպէյի Էստանէֆէնիները ազատամիտ գրութեան մը համար, Տիրապէքիրի վիլայէթը քարտուեցան :

Նարժուճի ընթերցողներուն յայտնի է որ Համիտ արտակարգ ճիգեր կընէ իր բանակը, նաւատորմը, իր երկրի հաղորդակցութեան միջոցները և մանաւանդ տնտեսական գրութիւնը ինկած վիճակէն բարձրացնել : Տեղական ստրկական մամուլի փառաբանական փնտառները ազմուկով մը գեռ ես յունուար ամսին մէջ ծանուցին որ օտար ապրանքներու մարքերը 8—11 և նոյնիսկ 14 0/0ի պիտի բարձրացուի :

Աս շնչին բան մը չէր ընթերցող, ամբողջ ներածութեան վրայ մէկէն 3 կամ 6 առ 100 յաւելով պիտեճէին մէջ խոշոր գումար մը պիտի մտցունէր Բայց Երուսաղեմի մեծ պետութիւնները, որ մեծ անպակներու պէս (հոս թուրքի) մարդու կեանքին ձեռք չեն տար այլ գրպանը միայն կը թեթեւցեն, աս մեծ պետութիւնները հաւատարիմ իրենց երկարամեայ «բօլիթիքային», իսկոյն «գարիթիլաօթիօն»ները և դաշնադիրները մէջ բերին ու ընդունեցին այդ յաւելումը, պահելով թուրքիոյ արտացեալ մարմինը տնտեսական կախումի ու ստրկութեան մէջ : Ան մնացին Համիտի իրատեսներն ու ազուտորիկ որոշումները գիւտնադիտական փոշիներու մէջ ցնոր կարգադրութիւն մեծ պետութիւններու :

Ան աստե՛ն Համիտ կառուցեալ և իր վարչութիւնը թափեց Պալքանեան հինգ մանր պետութիւններու վրայ : Մաքսային օրէնքները ատոնց ապրանքներու ոչնչացուց, և նոր օրէնքներ գրաւ :

Անքոր սաստիկ բարձրացուց :

Յունական գեղարարը բողոքած է, համարէն Պուլկարիոյ գործակալն ալ պիտի բողոքէ, հիմնուելով անոր վրայ որ Համիտ Պուլկարիա կը գիտէ ոչ թէ «նկար պետութիւն» մը այլ իր «վասալը», ուրեմն և կամ պէտք է ընդունէ անոր «անկախութիւնը» կամ պիտի շնչէ իր աստիճանը :

Եւ մենէն խիստ փորձանքը Ռուսիայի վրէժները կը պայտի, սրովհետեւ ան ամենէն շատ ապրանքներ մուծողն է թուրքիոյ : Բայց աս ալ քիչ է «օր ըլլայ» սրովհետեւ սուսէն կառավարութիւնը արդէն չափէր աւելի բարեկամ էր ու կը քննէր Համիտի :

ԲԱԺ

Փ. ՊՈՒՆՍ, 29 Մայիս

Լաւրանին շնորհներուն վրայ այն ազգայնական խօսքուած ու զբոլուած է որ, այլեւս նոր բան մը չէ մնացած յայտնելու : Հիմա մարդ չի կայ որ համոզուած չըլլայ հրապարակախօսութեանց ունեցած բարեբար մեծ ազդեցութիւնը հասարակութեան մը վրայ : Փիլիպպէցին ալ ըմբռնած էր շատոնց այս ճշմարտութիւնը, և սակայն, ինչպէս ամէն բանի առ հասարակ, այդ հաստատութեան ալ ծոռ ու շքով կը նայէր : Խօսողին անձին, ընտրուած տեղին կամ լաւանը կազմող մարմինն համեմատ կը փոխուէին իր տրամադրութիւններն ու դատողութիւնները : Այս պատճառաւ էր որ, անցեալ ձմեռ Գրասիրացի վարչութեան կազմած լաւաններէն կանոնադրապէս բացակայ գտնուեցան կարգ մը Փիլիպպէցիներ սրոնց համար խօսողին անձը կամ վայն հրապարակ մարմինը աւելի մեծ կարեւորութիւն ունէր, քան թէ ըստ իսկ խօսուելիք նիւթը. յաւիտեանական քէն պահողներ՝ սրոնք կը զգան, գիտեն, համոզուած են կատարուած գործին օգտակարութեան, և սակայն չեն հետաքրքրուիր պնով, որովհետեւ մտածած են անգամ մը քէն ընել ու փախչիլ հեռու բոլոր օգտակար ձեռնարկներէն :

Գրասիրացի եղբայրութեան լրատարներ, որ եղանակին փոփոխութեան պատճառաւ արդէն երկու ամիս ի վեր գաղթած է, կաշկանդուած էր այն կարգ մը սեզմամբներուն մէջ, զորս թաղաքորհուրդը իր պայման առաջարկած էր վարչութեան ու և պատահած խառնութեանց առաջընտառ ըլլալու համար, իբր զգուշական միջոց : Հոն խօսողը ինքզնիքը չլիքայի մէջ կը զգար, ստիպուած էր յարմարի վարչութեան պահանջներուն, այսինչ բաւր չի գործածել, այսինչ անտէր շարտարանել, հայկու՛յ մասին խօսուած աստե՛ն Գաբէի օրինակը չի տալ, յեղափո-

խութեան վրայ խօսուած աստե՛ն զէնքի, տինամիթի, ուսմրի խօսք չընել, և ասոնց նման յիմարական պահանջներ սրոնք աստե՛ն խօսին, որով կը շտաբեն, ետեւը կը մարեն ու կը ստիպեն զանի գարձուածքներու, տափակ ու անհամ փոխաբերութիւններու մէջ ամփոփել ինչ որ ամենէն յաւակ ու մերկ կերպով պէք էր արտասանուէր :

Այս տեսակ լաւան մը չէր կրնար գոհացնել այն Փիլիպպէցիները, սրոնք Պուլկարիոյ մէջ գոնէ խօսքի անսանձ ազատութեան իրաւունքը կարծած էին գտնել թրքական ճնշող բռնութիւններէն ետքը : Ան հիմայ կը տեսնէին թէ կառավարութիւն մը չէ իրենց խօսքերուն սանձ գնել փորձողը, բանա ու կախազան չէն յանդուգն աստե՛ն խօսին սպառնացող պատիժը : Իր արիւնակիցները, իր կրթութիւնը ու մոլի հարազատները—ո՛վ մարդկային կատակերգութիւն— կը ճգնէին մեր սրտերէն իսկ մեզի ամենէն նոյնիսկ, մաղթանքներէ աւելի սուրբ ու աղօթքէն աւելի երկնային իղձերը : Անվերջ ու փուճ կուր, նախատիք հայոյոյնք, սուտ, զրպարուութիւն, հա՛ս ինչ որ կը սպառնան այդ այլասեռած զաւակները հայրութեան իրենց խանդոտ, անկեղծ ու հայրենասէր եղբոր դէմ :

Եւ սակայն, շատերու համար անտանելի էր այս աններողութիւնը. եթէ ազգային մարմինները մեր ամենէն աւելի յարգած անուններէն կը խորշէին, մենք կը ցանկայինք, ընդհակառակը, անոնց մշտական յորջորջումը լսել ամէն հաւաքումներու մէջ և անոնց ուժն ու բարոյական հեղինակութիւնը փառաբանել ամէն առիթով :

Ուստի լաւան մը հիմնուեցաւ ազատ, անկաշկանդ, բայց ամէն անկեղծ սրտերու և ճշմարտին ու օգտակարին սիրահար բոլոր հայերու առջեւ : Հոն, ընկերափոքական բանտարական քիւլային մէջ, երէկ իրիկուն, ժամը 9 1/2ին տեղաւայտ Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէն տուաւ առաջին լաւանը : Ատե՛ն խօսաւ էր Տ. Զօրեան, նիւթ ունենալով «Արդի քաղաքականութիւնն ու հայկական հարցը» : Նախ պարզեց պատմական տեսութեամբ մը թէ ինչպէս կը ծնին ազգերու յարաբերութիւնները, այսինքն գիւտնադիտութիւնները : Ըսաւ թէ առաջին վիճակը ազգերու յարաբերութեանց մէջ, թաղանք, կողպուտը եղած է, որուն յաջորդած է կանոնաւոր հարկերու գրութիւնը : Կառավարութիւնները սրոնք յառաջ եկած են մարդոց համախորհումէն և այդ համախորհումներուն հետզհետէ ստուարանալէն, իրենց հասարակութեան պէտքերը գոհացնելու համար ստիպուած են տնտեսներէ որոշ

քանակութեամբ տուրքեր առնել : Գաղաքակրթութեան առաջացումը աւելի բարդ գրութեան մը հասցուց ազգերու յարաբերութիւնները, այսինքն անոնց քաղաքական կապերը : Տ. Զօրեան ըսաւ թէ՛ այդ յարաբերութեանց մէջ մեծ գեր կը խաղան ազգերու տնտեսական վիճակը : Երբ ազգ մը իր պտնուած պայմաններով և իր եկամտով ազգի իրենքով այլ եւս չկրնար իր պէտքերը գոհացնել, սպրիլ, այն ժամանակ կուզէ իրեն համար եկամտով նոր ազգիներ ստեղծել, տարածել իր հողային սեփականութեան սահմանները և իր արտադրութեանց համար նոր վաճառատներ յիշար որոնել : Պ. Զօրեան, մասնաւորեալ իր տեսութիւնը Հայաստանի վրայ, ըսաւ թէ Ռուսաստան այսօր տնտեսական անպահանջիչ պայմաններու մէջ գտնուելով, պէտք ունի Հայաստանին : Վաճառքի ճամբաները ամբողջովին գոց են գրեթէ իր առջեւ, Պարսկաստանի վաճառականութեան ճամբան իրեն համար գոց է, քանի որ Տրապիզոն—Կարին—Գարեթի գիծը ամէն գիւրութեամբ եւրոպական ապրանքներ կը փոխադրէ հոն, և մանաւանդ, քանի որ Էնկիւրիւ—Պալատու գիծը բացուած է : Սեւծովի նմանապէս փակ է իր առջեւ Վոսփորի միջոցաւ, իսկ Պալիկ ձովը տարւոյն մեծ մասը ստուած կը մնայ : Ռուս կառավարութիւնը իր կողմուի և ներկայացեան աշխարհի մէջ ըրած ծախսերը գոցելու և իր երկրին արտադրութեանց համար վաճառատներ ստեղծելու պէտք ունի : Եւ ատոր համար պէտք է Հայաստանը առնէ, որպէս Միջերկրականի տիրանայ : Բայց Գերմանիա ահեղ ոտնձգութիւններ ըրած է հոն, այնպէս որ Ռուսիոյ կողմէ ամէն քայլ ահեղ ընդդիմութեան մը պիտի հանդիպի իր ոտնիս Գերմանիոյ կողմէն : Եւ սակայն ինչ որ ալ ըլլայ, Հայկական խնդիրն է որ միշտ պիտի արժարժուի, այդ երկուքին կողմէ : Հայկական խնդիրը պիտի արժարժուի, նոյնիսկ եթէ հայերը չուզեն : Տ. Զօրեան Լատուի մէկ խօսքը մէջ բերելով ըսաւ թէ, քաղաքական գործերու մէջ մարդիկ շատ անգամ պատասխանատու կըլլան իրենց չըրածին համար : Մենք ալ, ինչպէս 1878ի պատահաբան, հիմակ ալ եթէ անտարբեր մնանք, ապա ինչ առջեւ պատասխանատու պիտի մնանք սրովհետեւ չենք ըրած ինչ որ պէտք էր : Տ. Զօրեան ցաւ յայտնեց նաեւ առ հասարակ այն երեւոյթի վրայ թէ, մեր մէջ հասարակ շարժին, խանութպան անգամ, որ ելք խնդիրը իր արհեստին վրայ ըլլայ, հարստութեամբ կընէ թէ ուրիշները խաբելու արհեստը սորվելու համար,

տարիներու պէտք ունեցած է, երկու բառով կը կարծէ վճռել, լուծել քաղաքական այն տեսակ հարցեր, որոնք տարիներու ուսումնասիրութեան պէտք ունին: Ատենախօսը ըսաւ թէ, քաղաքական հարցերը աւելի բարդ են, քանի որ բնական երեւոյթներու պէս չենք կրնար զանոնք անշատեկ, արհեստական կերպով արտադրել: Արհեստական անձրեւ, կայծակ կարելի է առաջ բերել, բայց արհեստական ազգեր՝ երբէք:

Լսարանը հակառակ իր հեռու տրութեան, երկուսն իստոն բազմութեամբ լեցուած էր: Ամէն մարդ գոհ սրտով մեկնեցաւ, և զգաց թէ բան մը սորված էր: Յանկալի էր որ, այս կարգի լսարաններ գոնէ շարաիւր մէկ օր տեղի ունենային:

Թ. Գ. Ա. Կ. Ս.

ՆԻՐԱՒՈՒՆԲՒՆ

Իրաւունքին 39րդ համարին մէջ գրուածք մը կարգացրինք ի մասին մեր նախածեռնութեամբ երեւան և կած հանրագրութեան, որով 130 չէզոք անձինք իրենց յարգանքի հաւատարմութեամբ ուզած էին ընծայել երկու պատուաւոր ազգայիններու՝ Տօքթ. Ալէքսանտր Սթարեկեանցի և Տօքթ. Յ. Ս. Փափազեանի, ցաւօք ստանելով յիշեալ թերթին այդ երկու անձնատրութիւնները արատաւորելու անբարեկամ ընթացքը:

Արդ՝ հարկաւոր կը գտանք այդ գրուածքին քանի մը կէտերուն պատահանելու:

Կրէք թէ զարագի երեւոյթով տեղի ունեցած է այդ հանրագրութիւնը. այդ զարագ բառը բոլորովին և մի միայն ձեռք կը պատշաճի, որովհետեւ զարագի համար է որ կըսուէք երկու պատուաւոր անձեր անպատուելու:

Կրէք թէ 3—4000 (՝) ժողովուրդէն միայն 130 հոգի ստորագրած են հանրագրութիւնը: Ենթադրելով նոյնիսկ թէ Վառնայի մէջ այդչափ հայ կայ, կը հաւատաք որ այդ տեսակ հանրագրութիւն մը ստորագրելու համար կարելի ըլլայ գտնել 130էն աւելի չիզոք անձեր, որոնք հետաքրքրուին ձեր յարուցած խնդրոյն՝ առանց ինչոյս պիտի չըսելու. մասնաւորապէս այդ կէտը գրած ատենինք քննաւ միայն չըրէք որ նոյնիսկ ներկայ թաղական կործակող միջոցով 114 քուէով ընտրուած է այս միեւնոյն 3—4000 ժողովուրդ ունեցող քաղաքին մէջ, իսկ Ռիբախնամը 38 քուէով միայն:

Երբոր 114 քուէով թաղական կործակող մը և 38 քուէով Ռիբախնամ կը կազմուի, ինչո՞ւ երկու պատուաւոր անձերու յարգանք ընծայելու և թերթի մը անորակելի ընթացքը այսպանելու համար անկարելի որ պատուի մեր 130 ձայնը:

Գալով ձեր երկու բանիւնաց անձերուն, կարելի չէ երեւակայել աւելի սղոյանական և աւելի ապուշ հնարք մը քան այն զոր դուք և այդ երկու բանիւնացները ստեղծեցիք:

Նախ պէտք է գիտնաք որ այդ բանիւնացներէն մէկուն թ. Փոլատի (՝) ինչ գիտուածով ստորագրած ըլլալը զգալով իր անունը աւրած էինք

(՝) Մծկեր երկխոսները և անչափահասները միասին. Մ. Խ.

(՝) Որ նոյնպէս հա. թ թապալեալ մըն է, արհեստ մը որու մասին արհամարանօք գոյք խօսեցաք հանրագրութեան ստիւիւ: Մ. Հ.

հանրագրութեան մէջէն, իսկ այն պարագան թէ այդ երկու բանիւնացները ստորագրած են հանրագրութիւն մը որուն մէջ չկար «Յ. Գուրպէթեանի ազգայնա ընթացքը» խօսքը, կամ այն է որ այդ ձեր բանիւնաց կոչածները կատարեալ ապուշներ են— որովհետեւ յիշեալ բառերը կան ու կը մնան հանրագրութեան մէջ, զոր կրնաք երթալ ստանել Եւրոպայի խմբագրատունը— կամ այն է որ անոնց ձեզի ուզած գրութիւնը ինքաթիւրած էք, և կամ այն է որ այդ մարդիկը վարձուած են վարկարկել ընելու 130 անձերը:

Եթէ յիշեալ բառերը գոյութիւն չունենան այն հանրագրութեան մէջ զոր ստորագրած են յիշեալ երկու բանիւնացները, մենք պատրաստ ենք իբրև կեղծարար թող սալու 3—4000 ժողովուրդէն որ հրապարակաւ թքեն մեր երեսը, Բայց եթէ անոնք գոյութիւն ունենան հոն, ձեր երկու բանիւնացները կընդունին որ մենք իրենց երեսը թքենք:

Իսկ եթէ դուք էք միայն որ խնդրութեամբ էք խնդրել, կը զիջանք որ ամբողջ Վառնայի հայութիւնը թքնէ ձեր երեսը:

Ուրիշ պարագայ մը. կրէք թէ հանրագրութիւնը ստորագրողները կարգաւ գրել չեն գիտեր. մեզք որ խմբագիր էք և ստորագրական տրամաբանութիւնը չունիք թէ կարգաւ գրել չը գիտցողը ի՞նչպէս կրնայ ստորագրութիւն գնել:

Կրէք թէ այս հանրագրութիւնը ի՞նչ վերաբերութիւն ունէր մեր յարուցած խնդրներուն հետ:

Սա վերաբերութիւնը ունի որ դուք իբրև խմբագիր, փոխանակ ազնիւ, ազգօգուտ ու պատուաւոր այդ անձերուն անունը յարգանքով բերանիդ առնելու, յանդիմացաք, զանազան անխտատվանելի հաշիւներով, զանոնք արատաւորելու, ինչ որ զայրոյթով և պիտանքով լեցուց հոն սարակութիւնը և ստիպեց զայն գոնէ հրապարակային ցոյցով մը ձեր թափած աղտեղութեան առաջին անունը, որովհետեւ անոնք ձեռք չառ բարձր արժանիք ունին:

Յարտրիւն Խաչիկեան  
Նիկողոս Պեյլիկեան  
Յրանկիլ Ահարոնեան (՝)

ՊԱՏԱՍԻՆ ՄԸ

Նորժամակ 222րդ թուին մէջ Պ. Հ. Գնունի հրատէր կը կարգար ինձ, իր յիշեցուցած խաչագոյի կեանքին մօտէն ծանոթ ըլլալու համար մանրամասնօրէն պարզեմ անոր գոնէ կարեւոր գործերը, ինչ որ ժամանակին արգէն խիստ կարեւորները երեւցան «Հայրենիք» մէջ: Ուստի՛ ալ հարկ չէ ըսուածը նորէն կրկնել:

Ներքեցէք Պ. Հ. Գ. խորհուրդ մը տամ ձեզ, լաւ կընէք անարժէք բաներու շատ կարեւորութիւն չի տաք, որով ոչ դուք ժամապատու պիտի ըլլաք ոչ ալ ընթերցողը:

ԾԻՒ ՌՇՏՈՒՆԻ

Ճրդի 30 Մայիս

(՝) Այս պարոնները Եւրոպայի խմբագրութեան հետ ոչ մէկ կապ ունին, իսկ երկուսը բոլորովին անծանօթ, վերջինը, կըսեն, նոյնիսկ բոլորովին հակաշարժութեան: Մ. Խ.

ԱՐՅԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանացոց կայսրը սիրաբանութիւններ կրնէ Անգլիոյ հետ. որ սկսեցցաւ նախ Հնգ-կաստանի սովետաշինբուն օգնութեան հասնելով. Հիմա Լոնտոնայի մէջ «ազգային բազար» մը բացուած է որուն արդիւնքը պատեարովի մէջ վիստաւածներու օգնելու համար է. վերջէլ բազմաթիւ նուէրներ զրկած է այդ «բազարին» ի թիւս որոց իր լուսանկարները՝ սեփական ստորագրութեամբ:

Անգլիական մամուլը մեծ հրճուանքով կընդունի վերջէլ միայն սիրալիր վարմունքը:

Խեղճ Պօէրնեք...  
— Թուրք կառավարութիւնը վերջապէս թոյլատրած է Ֆրանսական ընկերութեան Գամառկոսի երկաթուղիի զիծը շինել:

Այս մասին տարիներով բաւնակցութեան մէջ էին, որովհետեւ գերմանացիներն կուզէին այդ գիծն ալ ձեռք ձգել. ֆրանսական զեպան Գոնսթանի խիստ յիմուսները վերջ տուին այս ձգձգումին:

— Չինաստանի մէջ յուլուսները հեռուցեալէ կը սաստկանան, կայսրը և կայսրուհին խոսովարարները կը քաջալին են. կայսրը հրովարտակով յանդիմանել է չինական այն գործարարը որ քրիստոնեաները պաշտպանելու համար խոստովեամբ վարուած է չին խոսովարարներու հետ և անոնցմէ բաւական թիւով մարդ սպաննած:

Ինքիսի եւրոպական զեպանները կուզեն կայսրը անձամբ տեսնալ:

— Թայմը յոյուածով մը Անգլիոյ Լէ՛Ռուսիոյ կուսակցութեան մէջ տիրող հակաքրիստոնէական յուլումներուն:

— Բէքինի Թրանսական զեպանի զրկած հեռագիրներուն համեմատ Բէքինի, Թիէնցիների քովերը խոսովութիւնները շատ լաւ կերպարանք ստացած են, որովհետեւ Չինական իրաւաւարութիւնը ոչ մի միջոց ձեռք կառնու պատամբները զսպելու համար: Եւրոպական պետութիւններու ներկայացուցիչները համեմատութեամբ կը գործեն:

— Գերմանական ամիրալ Բէ՛մպիր կառավարութեան առաջարկած է միջազգային ուժերով պլոքէ ընել Թաֆուսի ծովափնեայ մասը գրաւել, որ Եւրոպացիները կարողանան ապաստան գտնալ:

— Չինական բրոքէտոր Տուգլաւ կարծիք կը յայտնէ որ Չինաստանի մէջ տեւողական խաղաղութիւն չի կրնար ըլլալ մինչեւ որ այրի մայր կայսրուհին զահընկեց չընեն:

— Ըստ Թանի պետութիւնները

թէ եւ սկզբունքով համաձայն են. բայց գործնական սրոշ ձեռնարկ չեն ըրած միասին Չինաստանի մէջ և ոչ ալ վճռողական ձեռնարկ մը նախադրած են:

— Պօէրնեքը նախքան Բրէտոն-րիայէն հեռանալու, սղոյանի պանթալէն վերցուցած են եւ թաղէս միլիոն ֆրանք ստար պանթալէն բան մը չին վերցուցած:

— Լ. Մարքուելլ ամերիկեան հրատարակող, Հոլիո վերագարձեր է Մաչատա-Թորպ ուր երկու ժամ տեսակցել է նախագահ Քրիւկերի հետ: Եւ կրտսի թէ նախագահին յանձնած է ամերիկեան հեռագիրներ, որոնցմով Քրիւկերի խորհուրդ կը տրուի հաշտութիւն խնդրել:

— Նախագահ Ետէյն Բէլլ ինչ կը գտնուի քանի մը հարկը հեծելազօրքով:

— Պոլիս Չիլոնիայէն եկողներու համար քարանձիհան 10 օրի բարձրացուցած են:

— Տրայիլոն ժամախախտ մէկ զէպք մը հաստատուած է:

— Փարիլի ցուցահանդէսի մէջ բացուած է Թրանսիլիւր բաժինը:

— Ներկայիս Ալպանները ոչ միայն Ալպանիոյ կուզեն տիրանալ այլ և Եպերոսի ու հին Սերպիոյ, Մակեդոնիոյ մեծ մասը:

— Պէրլինի մէջ ընկերութիւն մը հիմնուած է, որ «մանուկներ փոխանակելու» անունը կը կրէ:

Առ ընկերութեան նպատակն է ամբարն արձակուրդներուն մեծ քաղաքներու այն բնտանիքներն որ միջոց չունին մանուկները ամառանոց զրկել, մանուկները զրկել զիւրական այն ընտանիքներուն, որոնք փափաք ունին իրենց մանուկները զրկել մեծ քաղաքներու գեղեցկութեանց հետ ծանօթացնելու համար:

Ընկերութեան անդամ կը գրուին այդ տրամագրութիւնը ունեցող գլխակաւ և քաղաքացի ընտանիքները:

— Պրանսական, Անգլիական, և Ռուսական Պոլսոյ զեպանները յունական զեպանին խոստացած են մաքսային թարիֆան բարձրացնելուն համար Բ. Գրան դիմումներ ընել յօգուտ Յունաստանի: Պուլկարական գործակատարն ալ Երլազէն յայտարարութիւն մը ստացած է, որով իրեն կը հաղորդեն թէ՛ շուտով իրեն մաքսային թարիֆա մասին տեղեկութիւն մը պիտի տրուի: Պուլքանեան պետութիւններու ներկայացուցիչները կը յուսան թէ մաքսի բարձրացումը կը յետաձգուի մինչեւ որ ժամանակ գտնան առեւտրական գաշինքներ կապելու: Բ. Գրանը կը պնդէ թէ՛ մաքսային թարիֆաները նշանակելը իր անվիճելի իրաւունքն է: